ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 28 » սեպտեմբերի 2018 թ. N 224-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի սեպտեմբերի 26-ի ցեկուցագիրը

Կարգադրում եմ՝

1. «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի աշխատավարձի տնտեսված միջոցների հաշվին «ՇԱՆԹ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժության հետ կապված հատուկ առաջադրանքներն որակյալ կատարելու համար պարգևատրել մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների առաջին ենթախմբի քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք.Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թվականի սեպտեմբերի 28-ի
N 224 կարգադրության

ՑՈՒՑԱԿ

1. Մուշեղյան Յուրա - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2.Պողոսյան Անուշ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

3.Հարությունյան Վանիկ -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

4.Զոհրաբյան Արմեն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

5.Համբարձումյան Համբարձում- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

6.Զազյան Կարեն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, սպորտի և մշակույթի վարչության պետ

7.Ղուկասյան Վերգինե.- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ